



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հուլիսի 2017 թվականի թիվ 142 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ և 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի "Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրի կազմման, այդ համակարգով փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարզկատրման կարգը հաստատելու մասին" թիվ 1510-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչի զեկուցագիրը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին պարզկատրել 2017 թվականի 1-ին կիսամյակի կատարողականի արդյունքներով, մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի "Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարզկատրում" հոդվածով նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն կից հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ֆ. Ափինյանին՝ ապահովել որոշման կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

